# ՊԱՏԵՐԱԶՄ. ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, անցյալ շաբաթ աշխատանքներն սկսեց ՄԱԿ-ի 49-րդ Գլխավոր Ասամբլեան: Միջազգային դիտորդներն սպասում էին, որ ղարաբաղյան խնդրի կարգավորման հարցը պետք է քննարկվեր ինչպես առանձին ելույթներում, այնպես էլ ՌԴ և ԱՄՆ նախագահների առանձնազրույցներում: Նրանք չէին բացառում նաև քառակողմ բանակցությունների հավանականությունը Հայաստանի և Ադրբեջանի նախագահների մասնակցությամբ, որոնց ընթացքում կարելի կլիներ գտնել սկզբունքորեն նոր ուղի բանակցությունները փակուղուց հանելու համար:

Սակայն երկու գերտերությունների ղեկավարների ելույթները որոշակի պարզություն չմտցրին այդ հարցում, մասնավորապես Բիլ Քլինթոնի ելույթը, որի հիմնական միտքը երկու կողմերի շահերի փոխադարձ հարգանքն էր: Բ. Ելցինի ելույթի հիմնական նպատակն էր Վաշինգտոնին ապացուցել, որ անվտանգության համաշխարհային խնդիրների հետ պետք է ձևավորվեն նաև տարածաշրջանային խնդիրները: Ակնհայտ է, հենց այդպիսի կառույցներում է Ռուսաստանը տեսնում ղարաբաղյան և նման այլ խնդիրների կարգավորումը: ՌԴ նախագահը ընդգծեց Կրեմլի ջանքերի արդյունավետությունը ԱՊՀ մի շարք երկրներում խաղաղության հաստատման գործում, իսկ դրությունը Ղարաբաղում նա գնահատեց հուսադրող, որի արդյունքում կդադարի արյունահեղությունը:

Բացի այդ հայտնի է, որ Թուրքիայի պնդմամբ ղարաբաղյան պատերազմի հարցը մտցվել է ՄԱԿ-ի 49-րդ ԳԱ-ի օրակարգ: Քանի որ մեծ համաձայնագրի ճակատագիրը հարցականի տակ է, որոշ արևմտյան քաղաքագետներ գտնում են, որ ղարաբաղյան խնդրի միջազգային կարգավորման հարցում առաջին տեղ կմղվեն ՄԱԿ-ը և նրա ԱԽ-ն: Սակայն հայ մեկնաբանների կարծիքով ՄԱԿ-ը, որը ֆինանսական դժվարություններ ունի Կիպրոսի և Հարավսլավիայի խաղաղարար ջանքերն իրականացնելիս, դժվար թե շտապի միջամտելու Ռուսաստանի և ԵԱՀԽ-ի գործերին:

---

Ցավոք, վերջին ժամանակներս ավելի քիչ ուշադրություն է դարձվում ԼՂՀ-ի դիրքորոշմանը: Հավանաբար տարբեր մակարդակներում այժմ փորձում են ձևացնել, թե Ղարաբաղի ղեկավարության վրա ազդելու լծակները լրիվ հուսալի են, ինչը կապահովի խնդրի ցանկացած, նույնիսկ հակահայկական կարգավորումը: Հնարավոր է, որ դրան նպաստում է ԼՂՀ իշխանությունների վարած զգուշավոր քաղաքականությունը: Միևնույն ժամանակ չի կարելի չնշել, որ ԼՂ ներկայացուցիչները մշտապես մասնակցում են միջազգային տարբեր բանակցությունների:

Ուշադրություն է գրավում Ադրբեջանի ԱԳ նախարար Հասան Հասանովի հայտարարությունը: Նա ընդգծել է, որ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև Լաչինի հումանիտար միջանցքի՝ հայերի կողմից օգտագործման հարցում: Դա հնարավոր է, հայտարարել է նա, եթե «Հայաստանը գիտակցի իր պատասխանատվությունը գրավյալ տարածքներից զորքերը դուրս բերելու հարցում, քանի որ այդ է՛ հակամարտության կարգավորման հիմքը»: Բաքվի համար էլ կարևոր չէ, թե դա կլինի ՄԱԿ-ի ԱԽ-ի՞, թե՞ ԵԱՀԽ-ի միջոցով:

Փաստորեն Ադրբեջանի ԱԳ նախարարը մերժեց Ռուսաստանի հատուկ դերը տարածաշրջանում և հերթական անգամ հասկացրեց, որ Ադրբեջանը, չնայած մոսկովյան բանակցությունների մասնակցությանը, կմերժի ռուսական միջնորդությունը՝ ձգտելով չեզոքացնել Ադրբեջանի ղեկավարության վրա Մոսկվայի ազդեցությունը:

Թուրքական մամուլում հայտնված այն լուրը, որ թուրքական զինվորական ստորաբաժանումները ադրբեջանական պետականության ուժերի հետ համատեղ Նախիջևանի տարածքում իրականացրել են հաջող գործողություններ քրդերի «ահաբեկիչների» դեմ, վկայում է, որ Թուրքիան և Ադրբեջանը մտադրվել են լուրջ մարտահրավեր նետել Ռուսաստանին: Միայն թուրք զինվորական ստորաբաժանումների՝ այդ ինքնավար հանրապետությունում ներկայության փաստը, որը հակասում է միջազգային պայմանավորվածություններին, կհանգեցնի տարածքային և նույնիսկ մեծամասշտաբ խոշոր բախման:

Երևանյան մեկնաբաններն այն եզրահանգման են եկել, որ քրդերի դեմ պայքարի մտացածին առիթը պետք էր նախ՝ Հայաստանի դեմ հնարավոր ագրեսիայի դեպքում թուրքական կանոնավոր բանակի հենակետեր ունենալու, և երկրորդ՝ կասպիական նավթի հարցում Ռուսաստանի հետ անհամաձայնության դեպքում՝ օգտագործել Նախիջևանյան խաղաթուղթը: